

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՈՇԱԿ

№ 8  
AOÛT  
1929  
PARIS (France)

“ՀԱՅ ՅԵՂԱՓԱԽԱԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԴԱՆ

## ՉԻՆ - ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԲԱՂԻՌԻՄԸ

Ահա քանի շարաթ է քաղաքական աշխարհի ու շաղբութիւնը զբաղւած է չին-խորհրդային բարումով Մանկուրիայում։ Նոյն իսկ եղաւ մի վայրկեան, Մոսկայի վերջնագրից անմիջապէս յիտոյ, երբ զինաւաճ բնորհարումն անգամ թուում էր հաւանական։ այնքա՞ն լարւած էին կրքերը։ Սակայն, մասամբ համաշխարհային հասարակական հակարծիքի ճնշման տակ, բայց զիսաւորապէս սեփական թուրութեան գիտակցութեան հետեւանքով, երկու կողմերն էլ իւղացութիւն համարեցին բռնոյնանձի ճանապարհ՝ գերազանցով խաղաղ բանակցութիւններն ու համաձայնութիւնը պատերազմից։

Ստեղծած կացութեան մէջ այս ելքը, ի հարկէ, ամենէն աւելի իմաստունն էր, մասնաւորապէս խորհրդային իշխանութեան համար, որի զեկավարներն այնքան յիմար չեն, որ չհասկանան, թէ արտաքին ամէն պատերազմ իրենց համար յդի է կրտսարքը հետեւանքներվ, եւս առաւել պատերազմը Հեռաւոր Արեւելքում, հաղարաւոր մղոններով հեռու կենտրոնից, հաղորդակցութեան և պարենաւորման տարապայմանօրէն աննպաստ վիճակում, երկրի ներքին ջղագրգիռ, անկարուն դրութեան մէջ։ Մոսկայի վարիչները չին կարող, անշուշտ, հաշւել չառնել ուու-ճափոնական պատերազմի դասը բոլոր Պորտ-Արտուրներով ու Ցուսիմաներով։

Հասկանալի է, որ Կոմկուսի շարքերում քիչ չեն տարրեր, որոնց համար արտաքին պատերազմը նկատում է իրեւեն ներքին գեղոնութիւնները փարաւելու և խորհրդային իշխանութեան հեղինակութիւնը բարձրացնելու լաւագոյն մի միջոց։ Այլպէս է բռնապետութեան էռութեան զարգացումը ամէն տեղ և բոլոր ժամանակներում։ երբ ներքին յարաբերութիւնները սրւում են անսահման և ճնշւած

բազմութիւնների զայրույթը սկսում է դառնալ սպառնալից, երբ ժողովրդական ցասումն այլ եւս վտանգաւոր ձեւեր է ստանում գահի և իշխանութեան համար, արտաքին պատերազմը դիտում է փրկութեան ամենապղու միջոցը։ «Հայրենիքը վասնդի մէջ է», ներկայ գէպ-քում «կարմիր հայրենիքին սպառնում են միջ-ազգային գրամատիրութեան սպասարուներ չին աւազակ զօրավարները» — ինչո՞ւ ոտքի չառնել հայրենիքի պաշտամունքն ունեցող զանակածները ընդդէմ արտաքին թշնամու, ինչո՞ւ ա'յս ձեւով եւք չտալ լեռնացած ներքին գէգոհութեան։ Այս հեռանկարը գրաւիչ է նաև այն պատճառով, որ գիմացի հակառակորդը թոյլ է և, հետեւաբար, յաղթանակի հաւա-նականութիւնը՝ մեծ։

Բայց և այնպէս գերակշռութիւնը խաղաղ տրամադրութեան կողմն է։ Խորհրդային իշխանութեան պատասխանատու վարիչները գի-տեսն շատ լաւ, որ չին-ռուսական միայն Զինասամանով՝ ու Խորհրդային Միութեամբ. շահերը Հեռաւոր Արեւելքում շատ են բարդ ու խճճած, աւելի բարդ, քան նոյն իսկ Բայկաններում։ Միւս կողմից, պատերազմը Խորհրդ. Միութեան մի հեռաւոր ծայրում կարող է հեշտութեամբ ար-ձակել ձեռքերը, ներքին թշնամիների, ինչպէս և վտանգի տակ գնել սահմանները արեւմուտքում, ուր Պիլսուզկիները վաղուց դանակ են սրում Ռուսաստանի դէմ։ Այլեւ, ինչպէս ասաց Խորհրդային Միութեան ժողկոմիսորմէ փոխ-տեղակալ Ռուսուսակը, «պատերազմը իմանդ բան է, խաղաղութիւնը աւելի շահաւէտ է, քան պատերազմը» — Մոսկան դրամ չունի արտաքին պատերազմը վարելու համար։

Բոլոր տեսակէտներից խաղաղութիւնը բոլցեւիկների համար կենսական անհատել-տութիւն է՝ օդի ու ջրի չափ։ Այդ է պատճա-

որ, որ հակառակ ստացած շառաչուն ապտակի և այդ առթիւ, առաջին տպարութեան տակ, համած առթուկի, ինորհարային դիւնագիտութիւնը շատ հաշտութեամբ բռնեց բանակցութիւնների և հաշտութեան ուղին. վատ խաղաղութիւնը աւելի լաւ է, քան լաւ պատերազմը: Եւ մարդարէ չափտիք է լինել զուշակելու համար, որ չին-խորհրդային համաձայնութիւնը, վերջ ի վերջոյ, կը դառնայ փաստ թէկուղ ոռուական ամենագերագոյն շահերի զոհաբերութեամբ: Ազգայնական Զինաստանը այս անզամ կօպտազործէ բոլցեւիկներին յօգուս իր նպատակների, ինչպէս բազմաթիւ անդամներ օգտագործեց ազգայնական թիւրքիան:

Զին-խորհրդային բախումի մէջ, սպակյան, ամենին աւելի ուշագրաւը այն նւաճողական, իմպէրիալիստ ողին է, որ մի անդամ եւս այնպիսի անձոննի կոպտութեամ էրեւան բերին Մոսկայի վարիչները: Ի՞նչ է, խակապէս, այդ բախումի բնոյիթը. յանուն ինչի՞ բոլցեւիկները շանթ ու կայծակ են թափում Զինաստանի գլխին: Գլ՞ որ դեռ մինչ երէկ Զինաստանը երրորդ Միջազգային հոգեզգաւակն էր համարում, դեռ թարմ են մոսկովեան յուզաւած կոչերը. «Մանչա՛, Զինաստան», «Ուտապի՛ գիշատիչ իմպէրիալիստոնների դէմ»: Ի՞նչ պատահեց, որ խորհրդային թնդանօթներն ու զրահապատաները ուղղուեցին դէպի շինական սահմանները: Ի՞նչ է այս ամենի պատճառը:

Պատճառը շատ պարզ է և, աւա՛զ, չափազանց գուենիկ մի խնդիր — արեւելեան — շինական երկաթուղու աիրապետութեան հարցը: Ո՞չ սոցիսալիզմ, ո՞չ միջազգային յեղափոխութիւն, ո՞չ միջազգային աշխատաւորութեան՝ բանուրի ու գիւղացու բարեկեցութիւն. ո՞չ երկաթուղի ու երկաթուղու չէզո՞ք գոտի: Զինացիներն ուզում են կատարեալ աէց լինել իրենց հողամաս Մանջուրիային և, համաձայն մինինեան աւանդների, սեփական կարգը սահմանել մանջուրական երկաթուղու վրա. բոլցեւիկները չեն ուզում թոյլ տալ և, իրեւ ցարական իշխանութեան «ժառանգներ», Մանջուրիայի մի մասը կամենում են պահել իրենց թեւարկութեան տակ:

Մօտ 35 տարի սրանց առաջ, ցարական կառավարութիւնը, բռնութեամբ ու կաշուռքներով պահանջեց, որ մեծ պետութիւնների կոռնկի տակ գալարադր Զինաստանը թոյլ տայ նուսաստանին, շինական հողի վրայով, Մանջուրիայում շինել սեփական երկաթուղի, որը պիտի կապէք Խաղաղ Ովկիանոսը Սիբիրը ու Եւրոպական նուսաստանի հետ: Զինաստանը թոյլ էր, նուսաստանը ուժեղ ու յարձակողական — և արտօնութիւնը արեւեց: Եւ այնուշեան հարիւրառը միլիոններով զրամ թափուց երկաթուղու և յարակից չէնքերի կառուցման ու չէզո՞ք գոտու վարչական կազմակերպութեան և կառավարութեան վրա: Այսկեւան-շինական

երկաթուղու չէզո՞ք շրջանը փաստօբէն դարձաւ ոռուական հողամաս, որով Մանջուրիան է ընկանութեան ազդեցութեան տակ: Ես վիճակը յետագոյին գարձաւ ոռու-ճամփանական պատճառներից մէկը: ոռու-ճամփանական աշխարհակարութիւնները մրցում, իրար միւ էին ուտում Զինաստանի հողի վրա. և վերջինս անզօր էր իր իրաւունքները պաշտպանելու:

Յարիզմը տապալւեց: Եկալ խորհրդային իշխանութիւնը, որի առաջին քայլերից մէկը եղաւ հրաժարումը իր նախորդի «յափշտակիչ» քաղաքականութիւնից: Խորհրդային իշխանութիւնը հանդիսաւորապէս յայտարարեց, թէ նիքը հրաժարում է ցարական կառավարութեան ձեռք բերած իրաւունքներից բոլոր այն երկրներում, ուր կապիտուլիցիացիաների վիճակն էր ափրում — թիւրքիայում, Պարսկաստանում, Զինաստանում: Համաշխարհային յեղափոխութեան յաղթանակի յոյսի օրեր էին, և բոլցեւիկները պէտք չունեին հին ձեւի նւաճումների. ամբողջ աշխարհ պատրաստ էր նետելու խորհուրդների զիրկը...

Սակայն, իմպէրիալիզմի շրջանը տեւեց շատ կարծ. հազիւ թիւթեանիկի մի կենաք: Վրա հասան «սոցիսալիզմի կառուցման» գորչ օրերը: Եւ սկզբում քօղարկւած ձեւով, ամօթի երեսին, ապա բացայաց կերպով և առանց քաշուելու, խորհրդային իշխանութիւնը բռնեց ցարիզմի ուղիի: Պարսկաստանը՝ պերճախօս օրինակ: Բայց աւելի պերճախօս՝ արեւելեան-շինական երկաթուղու պարագան է:

Լինինի վարդապետութեան տարրական սկզբունքն է՝ ճնշած և գաղութային ազգերի վակաստար ազատութիւնը: Այս սկզբունքով Խորհրդային Խուսաստանը անմիջապէս պէտք է քաշէր Մանջուրիայից և շինականներին յանձնէր երկաթուղագիծը: Եւ այդպէս էլ ասւեց հոկտեմբերեան յեղաշրջման առաջին օրերին: Բայց՝ այլ բան է խօսքը, այլ՝ գործը: Իրապէս Խուսաստանը երբեք չենուացաւ Մանջուրիայից, զանազան պատրակներով մնաց այնտեղ, մինչեւ որ 1924-ին Կարախանին յանողեց կոնքել Պեկինի դաշնադիրը, որի գործութեամբ արեւելեան - շինական երկաթուղին գրում էր շին-խորհրդային միացային արիապատութեան տակ: Այսպիսով, ճափնական և անգլիական իմպէրիալիզմների կողքին Զինաստանում մնաց և բոլցեւիկւան իմպէրիալիզմը: Եւ բացարձակապէս իրաւունք ունեց Զան Փայ Շէքը, երբ «Կարմիր իմպէրիալիզմը» զուգագրում էր գրամատիրական մեծ պետութիւնների իմպէրիալիզմին:

Այսուհետեւ, 1924-ից ասդին, խորհրդային իշխանութեան քաղաքականութիւնը Մանջուրիայում ու Զինաստանում, խիսն վրան բաց ու կոպիտ կերպով, հետապնդել է մէկ նպատակ — այդ երկրների կցումը Խորհրդա-

յին Միութեան։ Աւստի բնաւ զարմանալի չէ, որ շատ ուսւ ազգասէրներ միշտ համակրանցով են հետեւել բոլցեւիկեան քաղաքականութեանը Հեռաւոր Արեւելում։ տարբեր նշանաբններով ու գործելակերպով նաև հետեւողականօրէն ձգտուի է իրականացնել ուսւ վեհապետական աւանդութիւնները, անգամ աւելի լայն ժաւարով, քան նոյն իսկ ուսական իմպէրիալիզմի սիւն Վիտուէն էր երազում։

Հասկանալի է, որ հետեւանքն էլ եղաւ նոյնը. ցարական քաղաքականութիւնը հասցրեց Յուսիմային. բոլցեւիկեան իմպէրիալիզմը առաջ բերեց չին-խորհրդային ներկայ բախումը Մանչուրիայում, որ պէտք է համարել սոսկ նախազգուշացում՝ նախակարապետը աելի խոչըր դէպքերի, եթէ Մոսկան սանձ չդնէ իր «արեւելեան քաղաքականութեան» բերնին։ Զինաստանի, չին ժողովրդի համար էական տարբերութիւն չկայ ցարիզմի և բոլցեւիզմի միջեւ. տարբերութիւնը միայն քանակի և ձեւի մէջ է. բոլցեւիկները կատարում են աւելի գուհելի ու բացայայտօրէն այն, ինչ որ ցարական իշխանութիւնը անում էր գաղտնի և զգուշաւոր կերպով։

Զինաստանի ու չին ժողովրդի շահերի տեսակիտից տարբերութիւն չկայ և՛ ճափոնական ու խորհրդային քաղաքականութեան միջեւ, չնայած որ ճափոնացիք վարում են բուրժուազ-դրամատիկական նւաճողական քաղաքականութիւն, իսկ բոլցեւիկները Զինաստանում «սոցիալիզմ»։ Ճափոնիրան իր ձեւքն է առել Հարաւային-չինական երկաթուղին և պինդ նստել Մանչուրիայի հարաւային կողմում, իսկ բոլցեւիկները նոյն ձեւով վարում են Հիւսիսային Մանչուրիայում։ Եւ դարձեալ տարբերութիւնը ձեւի և քանակի մէջ է. ճափոնացիք աշխատում են պահպանել

վայելչութեան գէթ արտաքին ձեւերը. բոլցեւիկների համար ձեւ ու վայելչութիւն գոյութիւն չունի. զարդ ու կարի ու կարի ըա...

Ճակատագրական կէտ կայ բոլցեւիկների գործունէութեան մէջ բոլոր ասպարէզներում. ինչի ուզում են ձեռք տան, տակից խայտառակութիւն է գուրս գալիս։ Ներսը «սոցիալիզմ» են կառուցում» — ստացւում է «նեպման» ու «կուլակ»։ Դուրսը՝ ազգերի հաւասարութիւն և աշխարհակալութեան վերացում են պահանձում — հետեւանքը լինում է նոր աւելի վատ տեսակի աշխարհակալութիւն։ Պայքարում են պատերազմների դէմ, բայց իրենք են պատերազմների աղբիւրը։ Քարոզում են ազատութիւն և արդարութիւն, և իրենք են անազատութեան, բանութեան և անարդարութեան ամենամռայլ մարմնացումը։ Բարեկամութեան կոչեր են ուղղում ամէն կողմ, և միայն ատելութեան ու թշնամների են հանդիպում — ատելութեան ոչ միայն տիրող դասերի, այլ ամենից շատ, աշխատաւոր, ճնշւած և ազատութեան տեսչացող բաղմութիւնների կողմից։ Ինչո՞ւ է այսպէս։

Որովհետեւ խարէկութեամբ, կեղծիքով ու բռնութեամբ կարելի չէ գաղափարական ազնիւ գործեր կատարել։

Որովհետեւ ազգերի հաւասարութիւնն ու ազատութիւնը նրանց համար լոկ պատրիարք է, միամիտներին խարելու միջոց, իսկ գործնականում նրանք նոյն նւաճողներն ու շահագործողներն են, ինչ որ և «դրամատիկական չնագայլերը»։

Որովհետեւ, ինչպէս Մերձաւոր, այնպէս և Հեռաւոր Արեւելքում, բոլցեւիկեան դիմակի տակ գործողը ցարական աշխարհակալութիւնն է՝ աւելի այլանդակ և աւելի չնական։

## Մտածու մնելը Հ. Յ. Դաշնակցութեան մասին

### ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐ

Ժամ անդամ առիթ եմ ունեցած մտածելու մեր կանոնագրի առաջին երկու կէտերի ժամին, որ ասում են. «Հ.Յ.Դաշնակցութեան անդամ լրնայ ըլլալ ամէն քաղաքացի, որ կրնունի կուսակցութեան ծրագրին ու դորեւլակիրպը, կենթարկի անոր կանոնագրին և որոշումներուն և ամէն ջանք կը թափի իրականացնելու զանոնք»: — «Իւրաքանչիւր գաշնակցական պարտաւոր է մտնելով խմբի մը մէջ՝ վճարել կուսակցական տուրք Շըշանային ֆողովի որոշած սակի համամայն»: Որքան խորածու եմ լինում այս յօւթեաների ներքին իմաստին, այնին աւելի համուրու եմ, որ նրանց կանոնագրական չոր ու ցամաք իսուսքին մէջ լիվին ուրեագծաւու է կինդանի գաշնակցականի զաղաքարական տիպարը: Ժամ հրահանդիչ զանք կը լինէր յետնորդերի համար եթէ մէկն աննէր և ուսումնասիրը մէր կանոնագրի փոփոխութիւնները՝ ժամանակի ընթացքին: Դա կը լինէր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան հետաքրքրական գրութեանը մէկը, ուր պարզ կերեադ զաշնակցական սերունդների բժրուումն իրենց գործի կազմակերպութեան և գործօն զաշնակցականի մասին: Ես նատակ չունեմ այդ պատմութիւնն անդուն: Ես կուգի այդ յօւթեաների թերաքանչենը ձեւակերպն և դաշնակցականի զաղաքարական տիպարն ուրեագծել աւելի պարզ ու մէկին, քան կարելի է տեսնել վերը բերած յօւթեաների հարևանցի ծանօթութիւնից, ուրիշ խօսքով՝ ես կուգի մենակնել այդ յօւթեաները, լուծել ու մանրել նրանց խտացած իմաստը:

Այսպէս, ուրեմն, կանոնագրիը հինգ պահանջ է զնում ամէն մի քաղաքացու առջև, որ ցանկանում է անդամ զառնալ Հ.Յ.Դաշնակցութեան. ա) ընդունել Դաշնակցութեան ծրագրին ու գործելակերպը. բ) ենթարկել կառակցութեան կանոնագրին ու որոշումներին. գ) ամէն ջանք թափել իրականացնելու զանոնք», այսինքն կուսակցութեան ծրագրը, կանոնագրին ու որոշումները՝ կուսակցական գործելակերպով. դ) որևէ զաշնակցական խմբի անդամ զառնալ և ե) դրամական տուրք հասուցանել՝ Շըշանային ֆողովի որոշած սակի համաձայն:

Կարելի՞ է այս հինգ պահանջներից որևէ մէկը կատարել և «Պաշնակցական» համարել. կամ կարելի՞ է նրանցից մի խանիքը ընդունել և «Պաշնակցական» նկատմէլ: Կանոնագրի տառա ասում է «ոչ»: Նա չինդ պահանջ է զնում և հինգին եւ գործացում պարտագրում: Խոսում է նույն ես ասում եմ. ոչ միայն կանոնագրի տառա, այլ, մանաւանդ, ոգին պահանջում է, որ այդ բարոր պայմանները լրացնի՝ «Պաշնակցական» նկատ-

ելու համար. և լրացւն ոչ թէ աստիճանաբար, այսօր մէկը վաղը միւսը, հետեւալ օրը մնացածը, այլ բոլորը միաժամանակ: թիէ մերձուստ քննութեան առնենք իրական կեանքի պայմանները և կուսակցականի կոչումն ու դերը, մնեք կը տեսնենք, որ ուրիշ կերպ կարելի չէ. որ ուրիշ «կերպերը» մեզ կը տան թերի դաշնակցականներ, մեր չուրջը կը համախմբեն համակրիններ, գործակիցներ, օժանդակներ, բայց բնաւ «Պաշնակցականներ» բարի բուն իմաստով և կանոնագրական առումում:

Առնենք, օրինակ, առաջին պահանջը, որ ասում է ընդունել կուսակցութեան «ծրագիրն ու գործելակերպը»: Նամի ինչ է «ծրագիր» ասածը: «Ծրագիրը» մի քաղաքական-տնտեսական ընդութ ունեցող մտայլացում է, որ ունի մի իմացական հիմնաւորում: «Ծրագիրը» նաի պատճառաբանում է, յետոյ այդ հիմնան վրա կառուցանում մի քաղաքական և տնտեսական կենցաղի ուրագիծ, որի իրագործումը համարում է ցանկալի և հնարաւոր: «Ծրագիրն», ուրեմն, մի ցնորք չէ կարգանք, այլ մի իրագործելի հնարաւորութիւն: Նա արդինք է որոշ մտածման և որոշ տենչերի: Նա ենթարկում է, թի հնարաւոր է յեղաշրջել տիրող քաղաքական և տնտեսական կոչութիւնը և տենչալի է համարում այս յեղաշրջումը: Նա կարծում է, որ մարդկան անձատ ճիգերը կարելի է համարել և այդ համագիր ճիգերով յեղաշրջում առաջ բերել տիրող կացութեան մէջ: Նա մի որոշ կարծիք ունի հանրային ուժերի ընթական կանոնի մասին, նա մին: Մի խօսքով, նա ոչ միայն որոշ պահանջների յայտագիր է, այլ և որոշ մտածումի յայտարար:

Արդ՝ երբ կանոնագրիը պահանջում է ընդունել «ծրագիրը» (թուղնենք առթամապէս «գործելակերպը»), նա պահանջում է ոչ միայն յարել որոշ քաղաքական և տնտեսական պահանջների, այլ և որոշ մտածման: Այս հանգամանքը լւաւագիս կը պարզի, եթէ այստեղ ուրագծենք ենթարկական թեկնածուների մի քանի տիրապարներ:

«Ծրագիրն ու գործելակերպն ընդունելու պահանջը հանդէս կարող է երկու վերաբերում լինել. մէկը կարող է ընդունել «ծրագիրը», բայց ընդունել «գործելակերպը». և հակառակը — ընդունել ու հաւանել «գործելակերպը», բայց մէրեւել «ծրագիրը»:

Իսկ «Ճրագիրն» բնդունելու պահանջի համովէպ նոյնակա երկու վերաբերում կարելի է ենթադրել. մէկը, որ բնդունում է «Ճրագիրն» իրը կառուցում, բայց մերժում է «մտածումք», որի արդիւնքն է այդ ծրագիրը. և միւսը, որ համամիտ է մտածման եղանակին և ընթացքին, բայց մերժում է «Ճրագիրն» իրը յուացում: Այս չորս ամփարի «Քանդականները», որ «բնդունում են» մեր Կանոնագրի պատինի պահանջ մասմբ կամ իրովին, բայց չեն ենթադրում կանոնագրին ու որոշումներին, անդամ չեն որևէ խմբի, կուսակցական տուրք չեն վճարում և ջանք չեն թափում մեր ծրագրի, կանոնագրի և որոշումների իրացման համար՝ — կարելի՞ է սրանց «գանձակցական» համարել:

Ենթագրած չորս տիպարները մտացածին չեն։ Մրանք գոյութիւն ունեն կեանքի մէջ և շատ անգամ իրանց «գաշնակցական» են ծախում։ Նրանցից ա՛յն մէկը, որ բնդունում է «ժրագիրն» առանց որդեգրելու դաշնակցական մտածում՝՝ իր քաղաքական-ընդիրային տենչերով մեղ հւու և, առանց մեր մտածումն ունենաւում։ Նա նոյն կարծիքին է Հայութեան պապաց բարեկցութեան մասին, բայց նոյն համոզումը չունի հանրային ուժերի զարգացման, նրանց հուսանքի շեղման, նրանց կառուցողական կարողութեան և այլ խնդիրների մասին։ Նա կարող է այն հաւատաւոր միամիտներից մէկը լինել, որ կարծում են թէ ամէն ինչ ընթանում է ճշշտ այն ուղղութեամբ, որ պէտք է և որ համարական ուժերի զարգացմար ինքնարերաբար և բնական ընթացքով տանում է դէպի «ժրագրի» իրացցում և, ուրեմն, մեր «ժրագրի» նրա համար միշտ մարդու գուշակութիւն է զալց օրերի, մի նախատեսութիւն այն վախճանի մասին, ուր պիտի հանգի ընկերային ուժերի «քնական» խաղը։ Մեր «ժրագրով» նաև լուսաբանում է համարում ընկերային շարժումները ներկան և նրանց արգիւնքի պապան և, ուրեմն, որեւէ կազմակերպութեան և հաւաքական ճիգի կարիք չեն։ Մեր այս լուսատես երազող է։ Մեր «ժրագրից» ուրաքանչում է նրան երազը միայն, առանց խթանելու նրա կամքը և գործի մղերու։ Ամենաչատը նա կարող է համաձայնիւ, որ «ժրագիրը» լայնօրին քարոզի, որ պարզ կի լայն զանգաւծներ լուսով պատճեն։ Կանոնագիրը այս տիպարներին «գաշնակցական» չի ճանաչում և իրաւունք ունի։ Դաշնակցութիւնը լաւատես երազողների խթակցութիւն չէ, այլ հանրային պայքարի կազմակերպութիւն։ Նա ճիգի և աշխատանքի կուսակցութիւն է, որ կարծում է թէ համագիր ճիգով ու աշխատանքով հնարաւոր է կեանքի կերպարանքը փոփոլ ժրագրին իրացման ճամբուլ։ Նրա համար «ժրագրից» մտամարցանք չէ, կամ մարդարակացում գալիք օրերի այլ ցանկալի պապակի յօրինածք և պայքարի ուղղուցոյց։ Նա չի վասահու իրերի «քնական» ընթացքին գիշեալու ու կամքը նա համարում է պատմակերտ պատահ, որ կարող է արդ ընթացքը փոխել։

կամ այն միւսը, որ համամիտ է մեզ, բայց մեր ժուռ է մեր ծրագիրը: Սա հաւատում է անհաստի գերի և զանգանձների կազմակերպած ուժին: Փոփոխելի համարում հանրային զարգացման հունը՝ դիտակի ճիգերի աղդեցութեան տակ: Պատմական շարժումներ հանդիսատես չեն միայն, այլ հետամուռ է իր գեր

նաղալու այնտեղ և իր գորշմբ դնելու նրանց վրա՝ անձամբ կամ համամիջ ու համամիտ ընկերների գործակցութեամբ։ Բայց հայութեան ապագան նա այլ կերպ է յօրինում իր մտածման մէջ և այլ տեսների իրացման է գոտում իր ճիղով։ Նա մեզ նման է իր մտածու և գործող, բայց ծրագրում է ուրիշ նպատակ ու գործ։ Իր տիպար նոյնանում է մենք, իրը ազդակ պարզունակ է ուրիշ ուղղութեամբ։ Նա կարող է դաշտացական համարել։ «Ա՞չ», ասում է Կանոնագիրը, ով չէ ընդունում Դաշնակցութեան ծրագիրը նա գուշ-նացական» լինել չի կարող, թէկուր և մտածէ իր «գաշնակցական» և իրը գործող տիպար նման լինի մեզ։ «Ա՞չ», ասում եմ ես. ոչ թէ «գաշնակցական», այլ հակառակորդ միայն կարող է լինել այլպիսի մէկը. որ մտքի նոյն ուժով և մտածման նոյն ուղղութեամբ, կամքի նոյն վճռականութեամբ կուտած է յիս մղերու ինձ իրը բարդութու, երբ պայքարի ճամփին հանդիպենք իրար. որպիշեաւ մենք նոյն ախպարհներն ենք իրը մտային և բարյական վախուցածք, բայց գնում ենք դէպի տարբեր նպատակներ։ Այս ուժերը, որ յենարան են ինձ խոցընդուռ են նրա համար, որպիշեաւ տարբեր «ծրագիրներ» հետապնդելով, մենք տարբեր զնահատութիւն ենք տալիս եղած ազդակներին՝ մեր «ծրագրի» իրացման անսակէտով։ Ինչ որ կարում եմ թէ պէտք է պահել իրը դրական արժէք իմ «ծրագրի» համար, նա կարծում է, որ պէտք է հորատակի իրը պարելի ոյժ, որ խանդարում է իր «ծրագրի» իրացման։ Մատումի և տիպարի նոյնութիւնն այսպիսով բաւական չէ «գաշնակցական» լինելու համար. պէտք է նաև «ծրագրի» նոյնութիւն։ Մի «ծրագիր» «Հնարաւոր» նկատել և «իրագործելի»՝ դեռ չի նշանակում «ցանկալի» համարել. լինել տիպար հանրային գործիչ, զետ չի նշանակում համարիս լինել։ Հակառակորդները կարող են նոյնարժէք լինել իրը բարյական և մտային կառուցւածներ, բայց դրանով չեն պայքարի հակառակ կորը լինելուց։ Մի «ծրագիր» «Հնարաւոր» մարդկանց կարող են գարձնել ազնիւ և անողոր թշնամի, իսկ միևնուր «ծրագիրը» — անձնւէր ընկեր։

Խակ ան ի երրորդը, որ ընդունում է մեր «ծրագիրն» ամբողջովին, բայց մերժում է «գործելահերաց»՝ այսինքն իր մատաւմը նման է մերնին, ընկերային շարժումների մասին նոյն կարծիքն ունի, պատմական անցեալին նոյն գնահատութիւնն է տալիս և ապազայի հանդէս նոյն տեսներն է նուուցանում իր հոգով, բայց չի հարծում, որ հնարինու է այդ ցանկալի «ծրագիրն» իրացնել մեր ընտառած ճամրով։ Որպէսէն ի՞նչ է «գործելահերաց», եթէ ոչ գործենու այն եղանակնենու, որ տանում են դէպի որևէ նպատակի իրացում։ Դաշնակցական թեկնածութեան այս տիպարը համաժիռ է մեղ և համատենչ։ Նա կարող է պաշտպանել մեր տեսակտները և ապազայի մեր կառուցումը իրը տեսական ինդիքտը, բայց դժգոհ կը մասն մեր գործի հանդէս։ Նրա բանաձևն է՝ «Քայլացած ամառը համաժիռ է մեղ և համատենչ։ Նա կարող է պաշտպանել մեր տեսակտները և ապազայի մեր կառուցումը իրը տեսական ինդիքտը, բայց դժգոհ կը մասն մեր գործի հանդէս։ Նրա բանաձևն է՝ «Քայլացած ամառը համաժիռ է մեղ և համատենչ։ Այս դժգոհին ամենից աւելի լաւ է լուծում հայութեան կենաքի բոլոր հիմնախան հարցերը, բայց այդ կարգի գործերով չէ, որ կարելի է աւանդ մերի նպատակին։ Ուրիշ խօսքով նա ինձ հետ է, քանի դեռ գնահատում եմ ներկան և յօրինում ապագան իրը

տայագացում, բայց թողնում է ինձ մենակ, երբ ես ծրագրից ու խօսքից անցնում եմ գործի: Նա երազող մէկը չէ, և ոչ անտարբեր է Հանրութեան բախտին, բայց նա ինձ հետ չէ պայքարի ճամբին: Նա կարող է շատ օտարակար գործեր կատարել, որ նպաստաւոր դառնան իմ աշխատանքին, բայց նա իմ գործը չէ, ոչ կատարում է: Լաւագոյն դէքառում նա գործնապէս գէտ չէ ինձ. գուցէ գէտ լինէր, եթէ կարենար, Համարելով իմ գործը չարիք: Բայց նա զատ է ինձանից: իմ ընկերը չէ: Նա կարող է լաւ հայ լինել և ընկերավար մտածում ու տենչեր ունենալ, բայց կարծել, որ ընկերավար ծրագրի հասնել կարելի է ոչ յեղափոխական գործելակարպված: Նա կարող է կողմնակից լինել «Մհանեալ և անիկ ընկերավար Հայաստանի» տակեցումին, բայց մտածել, որ դա հնարինութիւն է միմիան գգեանադիտական» ճամբարով կամ որեւէ ուրիշ եղանակով, սակայն, ընաւ ճամբարական գործելակերպով: Կարելի՞ է այս տեսակ մէկնին ըգայնկանական համարել: Կանոնագիրն առած է: «Ռ'»: Նա, որ մտածում է ինձ նման, ծրագրում է ապագան ինձ պէս, ընդունում է անհատի և զանգաւծների ապղեցութիւնը պատմական իրադարձութեանց ընթացքի վրա, բայց կուսակից է հորդվութական գործնականութեան և հակառակ յեղաշըլական գործելակերպից լինել չէ: Ան կարող է քր գուցէ ապագան անդամներից մէկը լինել Հայ Դաշնակցութեան, բայց ընաւ անդամ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Այնաշատը նա կարող է մէկ գաղափարական համակիրների շարքում տեղ բռնէլ, բայց մէր բռն գործին մասնակից լինել չի կարող: Մինչդեռ Կանոնագիրը «գայնակցական» է ճանաչում այն մարդուն, որ ոչ միայն նոյն մտածումն ու ծրագիրն ունի, այլ և նոյն գործելակերպը: Դեռ չեմ ասում, որ այդքանն ինկ բաւական չէ նկատում «գայնակցական» իր չումը մէկին տալու համար. գեռ մէտք է ենթարկել Կանոնագիրին ու որոշումներին, կուսական տուրք վճարել և այլն: Պէտք է այսպիսով «Համամիտառ» տարբերել «անզամլից»: Համամիտը գործակից և ընկեր չէ: Նա պարզապէս համարիտ է: Նու քեզ հետ չէ պայքարի ծան օրերին և պատասխանատութեան բաժին չունի քո գործում: Նա մտածում ու ծրագրում է քեզ նման, բայց իր գործով զատ է քեզանից:

Վերին թեկնածուն այն մէկն է, որ ընդունում է «գործելակերպը», բայց մերժում է «ծրագիրը»: «Ընդունել» ասան երկու միաք ունի. կարելի է մի գործելակերպ ընդունել տեսական, իբր մի խնդիր լուծում, և գործնապէս՝ իբր հարկադրանք: Մշակում է մի «ծրագիր»: Ենթարկում է, որ այդ ծրագիրն իրացործելի է: Զարց է գրուում — ի՞նչ ճամբար կարելի է իրացնել այս գործադրելի ծրագիրը: Մէկը կարող է այս հարցը լուծել իբր տեսական խնդիր. ուշադրութեան առնել Հանրային գործունէութեան արտաքին պամանակութեան, ճանաչէլ ու գոնահատու լուծում, ու լուծերի չափն ու կիրու և զար ոյ այն եղանակութեան, որ մշակ ծրագիրը կարելի է իրացնել յեղափոխական գործելակերպով: Կարող է այսպէս լուծել ինդիքը և լուծում նաև լուծում նաև: Սա նոյնպէս գործելակերպ «ընդունել» նշանակէ: այսինքն համամիտ լինել, որ այս՝ այս նաև նպատակին կարելի է հասնել այս ինչ ձևի գործե-

լակերպով և մինչեւ իսկ միմիշայլ այդ ձեւի գործելու կերպով։ Հասկանալի է, որ Կանոնագիրն այս տեսակ «ընդունողներին» «դաշնակցական» ճանաչել չի կարող։ Նա պահանջում է ոչ միայն ընդունել մեր ծրագիրն ու զործելակերպը՝ այլ և «ամեն նման թափել երականացնելու զանոնք»։ Ուրեմն, Կանոնագիրը ոչ թէ որոնում է տեսական լուծումները րնդունակ անդամներ, այլ որընճանական ուղիներով աշխատող ընկերներ։ Այս տիպը թէ կենածուն նման է «համամիտոց դաշնակցական թէկնածուներին այն տարրերութեամբ, որ նրանք «ընդունում են» «ծրագիրը», իսկ սրանք «գործելակերպը»։ Բայց նրանք այն առաւելութիւնն ունեն, որ աշխատում են նոյն «ծրագրի» օգտին թէկ տարրեր գործելակերպով, մինչդեռ սրանք միայն վկայում են մեր որգել գերածած գործելակերպի ճշուութիւնը, առանց մտահոգ լինեն ոչ «ծրագրով» ոչ նրա իրացման ճակատագրով։ Սրանք «կարծիքը ունեն», առանց «գործ» ունենալու։ Տրանք կարող են մեր գնահատիլ, «ամարելով համբային «ծրագրի» իրացման տանող վիտակ ուղիները գծողներ, առանց, սակայն, ներքուստ ապցելու մեր պայքարի տառապանքն ու վայրէքը և առանց մտահոգ ցերու մեր գործին ու պատասխանատութեան։

Բայց կան ուրիշ տիպարներ, որ ընդունում են «գործելակերպը» ոչ իր հանրային գործունէութեան տեսական լուծում, այլ իր գործնական պարտադրանք. այսինքն ոչ միայն գործելու մեր կերպը համարում են շխտում ու նպաստակայքարմաք, այլև պարագագի իրանց համար: Այս պարագները են կուռ տեսակ են. մէկն այն է, որ մեր «ծրագիրը» թէկն չի ընդունում լույսին, բայց անենչաղող է այնպիսի կարգերի, որ մեր «ծրագրի» մի մասն են կազմում: Կուզը օրինակ, Միացեալ Հայաստան, բայց ոչ անկախ, Համարենք անկախութիւնն անհնարին կամ անցանկալի: Կամ կողմանակց է Միացեալ և Անկախ Հայաստանի, բայց դէմ է ընկերվար կարգերին: Կամ գոհ կը լինէր լան ռամ-կափար կարգերի՝ առանց անկախութեան ու միացման, և այլն: Միաժամանակ, «գործելակերպի» գերաբեր-մամբ նա մեր տեսակէնտ ունի, այսինքն կարծում է, որ այդ ամենին կարելի է հասնել յեղափոխական ճա-նապարհով: Ուրեմն, նա յեղափոխական է իր գործով և հետամուռ է յեղաշրջական նպատակների, բայց դէմ

է մեր ծրագրի ամբողջութեան: Կարո՞ղ է այսպիսի մէկը զայնական համարւել: Կանոնագրի տառին նայելով պէտք է ասենք — «ո՛չ»: Նաև ոգին ժամանակ պատասխան է տալիս: Իսկ եթէ նա կազմակերպութեան նագամ է, տուրք է վճարում և նեթարկում է կանոնագրին: Այսպանը բառ է, որ նա ճանաչւի դաշնակցական»: — «Ո՛՛», ասում է Կանոնագիրը: Նա պէտք է ենթարկի նաև կուտակութեան որչումներին, և «ամէն կերպ աշխատէ իրականացնել զանոնք»: Իսկ այդ որոշումները կարող են վերաբերել «ծրագրի» ա՛յն կէտարին, որ ինքը չի լնդունում և, ուրեմն, նրանց իրացման համար «ամէն ֆանգիբել» չի կարող: Սանդեղ է մէ կիդդ կացութիւն: Մենք ստանում ենք ոչ թէ կարգապահ ընկեր, այլ անհապան մի դաշտական: Այսպիսի մէկը կարող է ուղեկից լինել մեկ կ գործակցել մինչև մի որոշ տեղ և մինչեւ մի որոշ ժամանակ: Նա կարող է մեզ պրատեղ համակիր ինսեւ

և օժանդակի, քանի դեռ պայքարում ենք մեր ծրագրի իր ընդունած կէտերի համար: Բայց կենք մէջ յաճախ են պատահում առիթներ, երբ հետապնդում ենք նոյն ծրագրի ուրիշ կէտերը: այն ժամանակ նա դադարում է ներքուստ մեղ հետ լինելուց: Նրա համար Դաշնակցութիւնը մի կազմակերպութիւն է, որին մասնակիցն կարող է ծառայել իր գաղափարներին: Կյանքի նա պատում է իրան կուսակցութիւնից և յարում է նրան իր գործի համար: Դաշնակցութեան գործերի տեսակից է կախւած նրա գործակցութիւնը: Նա ոչ թէ տան անդամ է Համբարձ իրան, այլ հիւր մի տեսակ: Նա ոչ թէ իր անձնութեանը կորովը տրամադրում է Դաշնակցութեան, այլ օպատագործում է Դաշնակցութիւնը իր հանրային նպատակներին հասնելու համար: Նա շատ բանի մէջ համամիտ է մեզ, բայց ոչ մեր ըուլը որոշումները համարում է պարտագիր: և այն-քանի ժամանակ գործակից է մեզ, որքան ժամանակ համամիտ է մեզ: Շատ կը լինէր ասել թէ նա մեր գանձակիցն է, քանի որ մենք անհաւտ է և ոչ կազմակերպութիւն, բայց կարելի է ասել, թէ նա մեր աղակիցն է: և այնքան վստահէի, որքան իր հաւանած գործն ենք կատարում և այնքան անսարքեր, չասենք հակառակ, որքան հետամուտ ենք մեր ծրագրի իր չհաւանած կէտերին:

Սրանց համակրանքն ու աջակցութիւնը ընտրանքով է, ոչ անվերապահ։ Սրանց չի կարելի վստահել կուսակցութիւնը. որդիչես նրանք զօդւած չեն «ծրագրի» նորութեամբ, այլ կապւած են այս կամ այն «գործողի»։ Այդ «գործի» իր կատարաման համար կարող է պարիսեր պահանջել և անանգ մեղ հետ կետ լինեն սարիներ շարուակ ու մեր կողքին կը կատարեն իրենց պարտականութիւնը կուսակցութիւնն հանդիպ, որ հնար ունեն նրա միջոցով ծառայելու իրենց նախընտրած և գերազանց խնդիրների լուծման։ Այդ «գործը», սակայն, կարող է մի հերթական խնդիր լինել, մի «Հայթաթարական ընդհարում», մի «եկեղեցական կալվածների գրաւում», որ կարող է տեսն համեմատարակ կարճ ժամանակ։ Այս կարող տիպաներն այդ օրերին գունդագուռն մտնում են կազմակերպութեամբ մէջ. այսին որ համամիտ են կուսակցութեան և՝ գործին և գործելակերպին։ Կատոնագիրն իմաստութեամբ նախատեսած է այս ամենը և՝ նա զանում է պահանջականիք կոչումը այս կարգի մարդկանց, որոնք ոչ թէ անդամ են գաշնակցական մեծ ընտանիքի, այլ հիւրեր են նրա կողշանքին։ Վերջանում է գիւղարրութը, մարտու են ջաները, և նախանք պաւում են նրանց տները, բոլոր բրձութեամբ ու մասցորդները թողարկում տառ տէսքրին մաքրելու։ Սրանք հոչակ ու փառք են ստեղծում Գաշնակցութիւնն և իրանց համար, բայց Գաշնակցութեան պահանիքը չեն և լինել չեն կարող. որդիչես կուսակցութիւնը ոչ թէ նրանց տունն է, այլ նրանց գործ Հայթայթողը։ Նրանք «ծրագրով» չեն կապւած, այլ գործելակերպով կամ «մի քանի» գործերով։ Նրանք լաւագոյնն են համակիրների, որովհետո ոչ թէ խօսքով, այլ գործով են համակիր. բայց նրանք մասամբ կատարում են գործելակերպը, նրանք մասամբ միայն ունաւում են «ծրագրի»։ Կա կանոնագիրն ասում է.

դաշնակցական կարող է լինել նա, որ ընդունում է կուսակցութեան ծրագրին ու գործելակերպը՝ ոչ թէ ընտրանօք, այլ լիովին:

Գործելակերպն ընդունողների միւս տիպարը շատ ուշագիր չէ՝ «ծրագրին»։ Ֆինչե խակ բնաւ մտահոգ չէ՝ այն մասին թէ կա՞յ «ծրագիր»։ Նա ընդունում է գործելակերպ ոչ թէ նրա համար, որ նա սահում է դէպի մի որոշ ծրագրի գործելութիւն, այլ որովհետև գործելու այդ կերպը զիր է իր սորտին։ Նրա համար այս ծրագրին անարժէք է կամ սակաւաթէք։ Գործն է նրան գրաւում և գործելու եղանակը։ «Դաշնակցական» գործն նա համարում է եռանզի սպասման մի միջոց, իսկ գործելու կերպը՝ յարմար իր խառնածքին։ Նա ոչ թէ յեղափոխական նպատակներ ունի, այլ յեղափոխական խառնածք։ Եթէ «յեղափոխական» գործեր կատարելու համար թատերական ստրմի պէս անհրաժեշտ է, որ մէկը ծրագրի ընդունի, կանոնագիր որոշումների ենթարկել և մինչև իսկ ուղարկ վաճառքը — նա պատրաստ է սիրութ։ բայց այդ ամենը անկարևոր են նրա համար։ Կարենը ու «գործն» է և գործելու եղանակը — մէ աշարելում, մի արշաւանդ, ծպաւած փախուստներ սոսթիւնական հետապնդումից, ազատ կեանց լեռների վրա՝ արկածաւոր և գտանդալից — սրանց են նրան գրաւում։ Այս «գործերն» անելու համար, ա'յս կիսանքն ասլրելու համար արժէ, որ մարդ «գաշնակցական» գրի և «ծրագիր», կանոնագիր ու որոշումներ ընդունի։ Սա մի ուրուն սիրառ է. մի մարգական, որ վանդի և արկած ճաշակի ունի և համարէ է գործ կենած հետ կաղապահ։ Սովորաբար սրանց ինիգամ ու ապամիներ են, համարձակ աշարելինքներ, հաւատարիմ ընկերներ և կարգապահ զինուորներ։ պատրաստակամ՝ վիճակաւոր գործերի համար։ Ակնածում են կուսակցական մարմիններից ու զեկավարներից, բայց սիրութ են իրենց ընկերներին։ Իրենց մտքի մէջ նրանք են «փսկական դաշնակցականները»։ միւնաներն՝ այնպէս... Կարելի՞ է սրանց «գաշնակցական» համարէ։ Լեզու չի զառնում, որ ասեմ թէ՝ «ո՛չ»։ Բայց կանոնագիրը սառու է համարձակ. «ո՛չ»։ Եւ իրաւունք ունի, եթէ լաւ մտածենք։ Մրանք «գործն» են քունում և թափական են աւանց «գործեր»։ Անկործութեան» չըջաններում նրանց թուում է, որ «Դաշնակցութիւնը մեռաւ. քաջուում են մի կողմ, վըրթմինցւմ են չարւունակ և խօսում են կուսակցական իւսանքի շքացման մասին։ Կամ դառնում են արկածախնդիր, սունդում են անդամութեան աւանց «գործեր»։ այս անդամ ո՛չ կուսակցական։ Անզովհետև նրանք կապւած էին «գործով» և ոչ «ծրագրով», այսինքն ոչ իրենց մտածումով ու հեռաւոր նպատակներով։ Դաշտում է «գործը», զալուում են կուսակցական կազերեց. մնում է միայն ընկերներ սէրն ու յիշասակե։ Դէս է մի կուսակցութիւն ինին, «գործեր» ձեռնարկէ, որ նրանք հանդէս գան։ Դէս է մէկը նպատակաւոր ծրագիրներ մշակ։ նրանց գործն խառնածքն կեր տալու համար։ Նրանք կուսակցութիւն և մէծանում։ Սրանք կուսակցական շնորհար բոլու առումով, բայց կուսակցութեան լաւագոյն աջակիցն են և գործակից։ Այս կարգի տիպարները չեն, որ կուսակցութիւն են ստեղծում ու պահում, բայց նրանց գործակցութեամբ է, որ կուսակցութիւնը գեր է խաղում և մէծանում։ Սրանք

«գաշնակցական» մեն յարատեռութեան տեսակէտով, բայց «գաշնակցական» իր զործի մէջ պէտք է սրանց նման լինի, սրանց պէտք խիզախ, համարձակ, ընկերասէր, անձնէք:

Թէ նրանք, որ «ծրագիրը» մասամբ են ընդունում, բայց լիովին յարում են զործելակերպին և թէ նրանք, որ «ծրագրին» կարեռութիւն չեն տալիս, այլ միայն «գործելակերպն» են որդեգրում — որոշ տեսակէտով նման են իրար՝ Դաշնակցութեան Հանգէպ ունեցած վերաբերումով: Մէկն ուզում է «գաշնակցական դառնալ, կազմակերպութեան ուժին կրթնան» իր Հանրային նպատակներին ծառայելու համար, միան ուզում է «գաշնակցական» Համարելի իր յեղափոխական խառնածքին ճառակ գոմելու: Համար: Ոչ մէկը և ոչ միւսը «գաշնակցական» չեն գտնում կուսակցութեան «ծրագրի» համար, բայց երկուսն էլ կողմնակից են միայն «գործելակերպին» և որոշ «գործերի»: Ոչ թէ գալիս են ամէն ինչ զուելու կուսակցութեան նպատակներին, այլ ամէն ինչ առնելու իրենց նպատակների համար — մէկը՝ Հանրային, միւսը՝ զգացական: Այն ուրիշ իրնդիր է, որ թէ մէկի և թէ միւսի «գործերից» շահուած է կուսակցութիւնը, ծառարում է կազմակերպութիւնը, մեծանում է ազգայութիւնը, բայց սրանը միւսի ուղիւնքին համար և թէ կողմնակից են միայն գործելակերպի համար: Եթէ կողմնակից իրենց համար ամէնք առնելու համար էլ կողմնակից միւսի միւսի ուղիւնքին համար, բայց սրանը միւսի միւսի ուղիւնքին համար և թէ կողմնակից իրենց համար ամրդղովին կամ կուսակցութեան դերը մեր կեանքում: Նրանք կարող են լինել եռանդուն և անձնէք գործիչներ, կազմակերպութեան կարգապահ անդամներ, հոչայ վաստակի անձամբ և մաքար բերել կուսակցութեան, բայց մինչեւ այն ժամանակ քանի դեռ հետ են, քանի գետ մենք իրենց հաւանած նպատակներին ենք հետաձոււմ և իրենց նախասիրած «գործերին» ենք անում: Բայց երբ հետազութում են նպատակներ, որ ծրագրային են, բայց իրանց չեն, կամ կատարում են «գործեր», որ անհամար են, բայց գիւր չեն իրենց խառնածքին՝ վերաբերումը փոխում է: Որովհետ նրանց համար «ծրագիրն» իր ամրոջութեամբ և «գործերն» իրենց բոլոր տեսակներով պարտադիր չեն: Ինչպէս առնենք լին, բայց «գաշնակցական» առաջնակցութեան ամրոցական պաշակիցներ:

Իսկ նրանք, որ «ծրագիրը» են ընդունում առանց «գործելակերպի», կամ «գործելակերպ» են ընկունում առանց պարտադիր լինելու: Նրանք նոյնպէս որոշ տեսակէտով նման են իրար: Նրանք տեսակն համարանք ունեն, առանց գոհացնում է մեր «ծրագիրը» իրը որոշ տենչէրի ձեւակերպութիւն և մեր «գործելակերպը» իրը որոշ նպատակների հասցնող, բայց իրանք են որ չեն գոհացնում մեր կանոնագրի պահանջները: Որովհետ կուսակցութիւնը տեսակն մտածում է մարտացայր չեն, այլ հանրային գործերի աշխատանոց: «ծրագիրն» ու «գործելակերպը» մտային վարչելի առարկաներ չեն՝ իրը յօրինածք ու խնդրի լուծում, այլ գործնական կեանքի պարտադրանք

և իրը նպատակ և վարժունքի կանոն: Բաւական չէ մառվին համամիտ լինել «ծրագրին» ու «գործելակերպին», որ մարդ համարուի «գաշնակցական»: պէտք է նաև գործնապէս աշխատել այդ «ծրագրի» իրացման համար, և «գաշնակցական գործելակերպով»: Ինչպէս տեսում էք, չկայ «գաշնակցական» միմիշյն «ծրագրով» ու տեսական «գործելակերպով». կան և կարող են լինել Դաշնակցութեան ծրագրին ու գործելակերպին համարի մարդիկ:

Այսպէս՝ ջննալով զաշնակցական թեկնածուների այլարան տիպարներ, որ բնդունում են մեր կանոնագրի առաջին պահանջը — «ծրագիրն ու գործելակերպը», մենք տեսնում ենք, որ միմիշյն մի պահանջին գոհացում տալիք որիէ քաղաքացի գաշնակցական գտանալ չի կարող լի կարողութիւնը: Գործը այսպէս: «Գործը» պէտք է, որոշ «ծրագրի» հասնելու համար: «ծրագիրը» պէտք է գործերին իմաստ տալու: Համար: «Գործը» կատարել, առանց «ծրագիր» հետազոնելու և «ծրագիր» գաւանել, առանց «գործերով» իրացնելու երկուսն ևս «գաշնակցական» վերաբերում չեն կեանքին: Յեղափոխական նպատակներ ունենալու առանց յեղափոխական գործելակերպի կամ զաշնակցական գործելակերպ որդեգրել առանց դաշնակցական ծրագրին՝ նոյնպէս «գաշնակցական» վերաբերում չեն կեանքին: Նա որ կամենում է զաշնակցական լինել՝ անխուսափօրէն պէտք է դաշնակցական ծրագիրը և գործելակերպ որդեգրէ՝ անվերապահ և լիովին: Ու պէտք է նաև, որ դաշնակցական մտայնութիւն ունենայ, քանի որ՝ թէկ տարամիտ մարդիկ կարող են միատեսակ նպատակներ ու գործ ունենալ, բայց ոչ միշտ նոյն նպատակներն ու միշտ նոյն գործը: Նրանք կարող են մինչև մի որոշ աեղ և մինչև որոշ ժամանակ իրար հետ յանալ, բայց այնունույն պահանձնագրին, այն անդամները, որ կապած են իրար միևնույն «ծրագրով» և որդեգրած են միևնույն «գործելակերպը» — ու ասել է թէ նոյն մտանութիւն ունին — Դաշնակցութիւնը կը դառնայ տարրեր դաւանանք ունեցող մարդկանց մի խմբակցութիւն, որ չունենալով գործունութեան միևնույն տենչէրը՝ շուտով կը շեղի իր ճամբան և զիւրաւ կերթայ գէպի քայլայութիւնը: Աստեղ օգնել չի կարող մինչև իսկ այն պարագան եթէ բոլոր տարրեր անդամները ենթարկեն կուսակցութեան միևնույն կանոնագրին ու որոշումներն: Որովհետ Դաշնակցութեան կանոնագրին ու որոշումներն ենթարկել զեռ չի նշանակում «գաշնակցական» լինել: Կանոնագրի ու որոշում արդինք են մի որոշ մտայնութեան: Կանոնագրիը կազմում է որոշ «ծրագիր» հետազոնելու համար և որոշումները կայացնել, սիկ սրա համար պէտք է դաշնակցական մտայնութիւնը ունենալ և Դաշնակցութեան «ծրագիրն» ընդունել:

(Տարրունակելի)

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ Հ. Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ XI ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԴՈՒՄ

III

**ԵՐԿՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ**

**Հ. Յ. Դաշնացութեան կուսակցական գործունէութեան խարիսխի Երկրին է և, բնականապար, Երկրի կազմակերպութեան խնդիրները կարեւոր տեղ պէտք է բոնէին Ընդհանուր ժողովի օրակարգի մէջ:**

**10րդ Ընդհ. Ժողովը Երկրի կազմակերպութեան մասին մի շաբաթ որոշումներ էր հանել, որոնցից մի քանիսը Կազմակերպական Կանոնների յօւթածներ գարձան, իսկ մաշնացածները պիտի գործադրուէին ներքին Հրահանքների կարգով: Սակայն, յետապայ տարիների փորձը ցոյց տեց, որ այդ որոշումները չեն համապատասխանում այս առարկայութեան պայմաններին, որոնց մէջ բարե կուսակցական աշխատանքներն առաջ են տարւում Երկրում: Զեկայի պրոգրամսինները, որ անհամական ողովանք կազմէին ցարական օլիբրանայի ամենալավիք ներկայացնուցիներին իսկ, բրամիկների ստեղծած բարքերը, որոնց մէջ ընդառաջանութիւնը, յուդայական համբորյները, ընկերագաւառութիւնը, լուսուութիւնը և բացայաց մատութիւնը հանրային առաջնութիւններ են նկատում, վերջապէս, Երկրում մեր հետապնդած քաղաքական պահանջների հրայատուկ բնոյթը — այս բոլոր անհարեւու էր էին դարձնում հիմնական վերաբնութեան ներմասները Երկրի քաղաքակերպութեան ձեւը:**

**Հասկանար պատճառներով մենք չենք կարող այս տեղ վերլուծութեան ենթակել օրակարգի այս կտտի մասին արտայարտած տեսակէտները և հանած որոշումները: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ այդ որոշումներն ազգակ են Երկրի մեր կազմակերպութիւնը դարձնելու աւելի ճկուն, աւելի դիմացկուն և աւելի վճռական մեր քաղաքական առաջարրութիւնների հետապնդան գործում:**

IV

**ԱՐՏԱՍԱՆԱՄԱՆԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ**

**Արտասահմանի մեր կազմակերպական ըրջաններն աչքի են ընկնում իրենց խայտարդեառութեամբ: Նրանցից իրաքանչիւրն ունի իր ներքին կանոնագիրը, որի մէջ, մասամբ ընդհանուր կազմակերպական Կանոնների հետեղութեամբ, մասամբ էլ տեղական հակացողութիւններով ջատած:**

բը, եղանակները և փոխարարերութիւնները: Այս կանոնագրերը գարմանալիօրէն տարբերում են իրարից: Անգամ այն հիմնական հարցը, թէ ո՞վ կարող է անգամ համարել Հ. Յ. Դաշնակցութեան նրանց մէջ միօրինակ ձեւակերպութիւն չունի — էլ չենք խօսում միա մարամասնութիւնների մասին»:

Առաջին հերթին այս հարցադրութեամբ էր ներկայացած արտասահմանան կազմակերպութեան իրնդիրը Ընդհանուր ժողովին: Վիճարանութիւններին այս հարցի չուրջը բաւական բուռն էին: Ընկերներից ոմանք, ենիւլով ապակենարունացման սկզբանքից, որ, Դաշնակցութեան հիմնագրութեան օրից ի վեր, նրա կազմակերպութեան հիմքն է կազմել, ոչ մի անգամանեւութիւնն չէին տեսնում այն հանդամանքը մէջ, որ արտասահմանան Երշաբային ժողովների կողմէուց մշակւած ներքին կանոնագրերը իրարից տարբերում են, մահաւանդ որ իրանց գործադրութեան պայմաններին էլ շրջանից շրջան տարբեր են: Ուրիշները, մազաշափ անգամ չշնչելով ապակենարունացման սկզբանքից, որ այնքան գրական դեր է կատարել մեր կուսակցութեան ծաւարձման, ճկունութեան և կենսունակութեան մէջ՝ գտնում էին, որ այդ սկզբունքը բնաւ անհամաժշտ չէ գարձնում, որ ներքին կանոնագրերը հիմնական իրնդիրներուն բայ կամ շնորհները կատարեն. ընդհանուր կազմակերպական Կանոնների հիմնական տարմակըրութիւններին ունի:

Ընդհանուր ժողովը որպեսք այս Երկրորդ անսկակէտը և յանձնարարեց Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն հանամուռ լինել, որ ներքին կանոնագրերի մէջ կատարեն այն փոփոխութիւններն ու սրբագրութիւնները, որոնք անհամաժշտ են, որպէս նրանք ներդաշնակն մեր ընդհանուր կազմակերպական Կանոններին և անհարի պէտական թիւնենքը չառաջացնեն մեր կազմակերպական կեանքում:

\* \* \*

Արտասահմանան կազմակերպութեան հարցի քընութեան ժամանակ Ընդհանուր ժողովը կանդ առաւ և մի կարեւոր թերութեան վրա: Դա այն է, որ մեր կազմակերպական կեանքը գրեթէ ոչ մի միառում չէ ցոյց տալիս արգիանալու, ժամանակակից պայմաններին համապատասխան ձեւեր առնելու: Միշտէու բոլոր յեղափոխական և ընկերվարական կուսակցութիւնները ժառանակի ընթացքում փոփոխում և կատարելագործում են կազմակերպութեան եղանակը՝ իրենց անդամների

մէջէ ընկերական, մշակոյթային, ներական և նոյնիսկ անձնական սերո կապէր հաստատելու համար, մեր կուսակցութիւնը կառչած է մնամ կազմակերպական այն հիմ եղանակներին և միջոցներին, որոնք մշակել են ինսունական թւականներին, երբ գտափարական մոլեսնագութիւնն ու կոյր հաւատը բաւական էին նկատում մարդկանց իրար շաղկապելու և հաւաքական աշխատանքի մղելու համար:

Այս կազմակերպական յնուննացութիւնը Դաշնակցութեան գտափարական որի լաւագործ ապացույն է հանգիստում, ի հարկէ: Երբ այսօր իսկ Խանոսը արշաւանքը, Բանկ Օտառոմանի ցոյցը և մեր պատագրական պայքարի միւս հերոսութիւնները, որոնք արդէն պատմութեան սկզբաններին են գարձած, բաւական են նկատում հայ աշխատաւոր զանդաններին Դաշնակցութեան դրօւի տակ պահելու համար, այդ ցոյց է տալիս, որ Դաշնակցութեան գաղափարներն ու զործերը շարունակում են տիրականօրէն իշխան հայ ժողովրդի մտքի և սրբի վրա:

Սակայն, գտափեցիր հանդերձ Դաշնակցութեան գտափարական ուժի այ հմայիչ և շաղկապող ապացութիւնը՝ Ընդհանուր ժողովը չէր կարող անուս առնել, որ մեր գործունելութեան պայմանները հիմնապէս փոխած են. հաւաքար և ամհրաժեշտ է նոր պայմաններին համապատասխան ձև և բովանդակութիւն տալ մեր կազմակերպական կենաքին արտասահմանում:

Այդ նոր ձեւերն ու բովանդակութիւնը գտնելու դժւարութիւնները մեծ չեն: Մեր կազմակերպական բոլոր ըշջաններում զործող օտար կուսակցութիւնները,

և առաջին հերթին ընկերվարական կուսակցութիւնները, արդէն մշակիլ են և շարունակ մշակում են հաւաքական ձեռնարկների ծրագրներ — սկսած ընկերվարական գրոսանքներից և մարդական վարժութիւններից մինչև փոխադարձ օգնութիւնն, տնտեսական գործակցութեան, մշակոյթային յառաջացման և ընդհանրապէս մտաւոր զարգացման ձեռնարկները — որոնք իրենց արդուլութեան մէջ գործոն բովանդակութիւնն են տալիս կազմակերպութեանը և կենաքի շաղախ հանդիսանուն երան անունների միջև: Մեզ մնում է միայն ծանօթանալ այս միջնորդներին և ընտրել նրանցից այն, ինչ որ յարմար է մեր կուսակցութեան առանձնայատուկ պայմաններին:

Լսա ինցին հասկանալի է, որ յիշեալ միջնորդի ընարութեան և կիրառման ժամանակ մենք մի բոպէ իսկ աշքաթող չպէտք է անենք, որ Դաշնակցութիւնը յերափոխական կուսակցութիւնն է և միշտ պէտք է պատրաստ լինի գիմարդաւելու հայ ժողովրդի քաղաքական պահանջներին նիւթական, բարյական և ֆիզիքական ծանր գոհողութիւններով: Սրա համար էլ Ընդհանուր ժողովը, արտասահմանեան մեր կազմակերպութիւնը արդիացնելու որոշում տալով հանդերձ, մարմինների յասուկ ու չափորութիւնը հաւաէց կուսակցութեան յեղափոխական աւանդութիւնները և մասնաւոր նրա մարտական ոգին կենդանի պահելու պահանջի վրա: Այս պահանջը բխում է Հ. Յ. Դաշնակցութեան էութիւնից և ոչ մի կազմակերպական նորմուծութեամբ չի կարող անտես առնել...

Ա. ԶԱՄԱԼԵԱՆ

## ԿՈՄՄՈՄՈՒԻ ԾՈՑՈՒՄ

Առ 15 փետր. 1928թ. Հայաստանում կար առաջին աստիճանի (տարրական) 772 դպրոց 69,071 աշակերտով, որից 47,127 մանէ, 21,944 աղջիկ: Եօթնամեայ՝ 22 դպրոց 8,802 աշակերտով՝ իննամեայ՝ 2 դպրոց 905 աշակերտով: Երկրորդ աստիճանի (միջնակարգ)՝ 8 դպրոց 2,862 աշակերտով: Գիւղերիտասարդական՝ 41 դպրոց 4061 աշակերտով: Մեծահասակների՝ 1 դպրոց 425 աշակերտով և ուղիւշ դպրութիւն կից՝ 1 դպրոց 46 աշակերտով: Արագիսով, անցեալ ուսումնական տարրայ ընթացքին Հայաստանում զոյութիւն ունիք 847 դպրոց՝ 86,192 աշակերտով\*): Սրա վրա պէտք է առելացնել և բարձրագործ գարժարանների ուսանողութիւնը շուրջ 2000 հոգի — համալսարան, երաժշտասունց, բանափակ՝ և այլն:

\* «Խորիդր. Հայաստան»՝ 22 մայիս, 1929:

Ահա այս ժամ 90 հազարանոց դպրոցական զանդանի, որ կազմում է Հայաստանի կոմունիստական երիտասարդական — կոմերիտական միութիւնների գլխաւոր ազբէւրը: Այստեղից է առնում Կոմունիստական կուսակցութիւնը այն տարրերը, որոնք բանելու են մաշուղ գործիչների տեղը, հանդիսանալու են վալւայ զեկավար ոյթը: Ճիշտ է, կոմերիտմիութեան մէջ ժմնում են և ուրիշ տարրեր, ոչ զպրոցականներ՝ բանուրներ, գիւղացիներ, մակներ, որոնց թիւը շատ խշոր է, բայց հիմքը աշակերտութիւնն է և ուսանողութիւնն: Այդ պատճառով, երբ խօսում է կոմերիտականների մասին, ընթացնուր գծերով պէտք է հասկանալ ուսում առնու նոր սերունդը: Հետաքրքրական է, ուրեմն, կոմերիտական շարժման օրինակով, տեսնել, թէ գալափարական ի՞նչ պատկեր է ներկայացնում Հայաստանի արարուայ երիտասարդ սերունդը: Այս

մասին վերջերս խորհրդային մամուլը բաւական առաջ նիւթ մատակարարեց: Ի՞նչ է ասում այդ նիւթը:

Հայաստանի Կոմերիտմիութեան Երգ համագումարի առթիւ, բուհեկի Վ. Անանեանը «Խորհրդ՝ Հայաստան»-ի 18 մայիս համարում զետեղել է մի շնչարձակ յօւղած՝ «Թիւքումները Հայաստանի Կոմերիտմիութեան շարքերում», ուր առաջ են բերած կոմերիտական շաթժման արդի պատերը բնորոշող բարձրթիւ պաշտօնական փասաւը: Այդ փաստերից Երեւան է, որ «Հայաստանի Կոմունլը իրուրիպական պայքարի Փրոնաւում ունեցել է Երկու շրջան: Առաջին շրջանը՝ դա Հին վեկավարութեան շրջանն է (այսիդո՞մինչև անցեալ տարի. Խմբք.), երբ Կոմունլի կաղմակերպութիւնները գեղօրիէնտացիայի էին ննթարկեւել զանակարպային թշնամութեան հանդէպ, երբ իրէուողգիան Փրոնաւի լայն ճեղքած քննութեանը միութեան ննրսն էին խուռում թշնամութիւնուները, երբ կոմերիտական բնանկները իրէուրիպապէ գրիթէ զինաթափ էին եղել որ ըստ օրի աշխուժացող հականիորդութային գաղափարախօսութիւնների դէմ»: Իրեւ հետեւեանք նման դրութեան, բնականաբար, ձեռք առնեցին իսխան միջոցներ: Կոմունլի շաքերից դուրս նետեցին ահապին թուղ (մոտ 4000) անհարազատ թէ ճահճացած տարրեր): Ակսեց Երկրորդ շրջանը, բայց այս շրջանում էլ գլխաւոր վասանկ միութեան ներսում է աշ վասանկու հաշտութականութիւնը նրա հանդէպ: Կոմունլի ներսում աշ թեքման բարդաթիւ փաստեր կան: Ասել է, ճնոր զեկավարութիւնն» էլ չօգնեց...

Անանեանը թերում է մի շարք օրինակներ: «Մինչև խորհուրդների վերջին վերընտուրութիւնները մենք բարձրթիւ դէպեքը ունենք, երբ կոմերիտականները խորհուրդների միջոցով պաշտպանում են կուլակներին (Պօլոս-Քիլիսա), չեն պաշտպանում բարտակների (մշակների) շահերը, իշեցնում են կուլակների հարկերը (Սամազար), աջակցում են կուլակներին (Ֆրանգանու), դպրոցական ֆոնդի Նողերը կուլակներին են յանձնում, չեն հաւատական կոլլուզութեամանը, խուռապի են ենթարկում մեր գեւարութիւնների առաջ, յետ են քաշում պայքարից և, ընդհանրապէս, պրոիտարիատի արտապայտից չեն գեւուում»: «բազմաթիւ կոմունլիստներ կոլլուզոնի հաւատականութեամանը, իսկ շատերն էլ լուս են կոլլուզի շարքով («Անաստած» կոլեկտիւ, Երևարդ, Օշական, Ղզղլամուր և այլ գիլբերը): «Մեր խոչոր կոլլուզոններից մէկի կոմերիտական նախապահը չուպինալով պատամարդի» լինել, պայքարի մտել կուլակների հետ, 2-3 ամիս շարունակ շրջկոմ դիմում դիմումի յետեց էր թափում կոլլուզի պատելու և մի «թէթե» ծառայութիւն գտնելու համար: «Ականջ գինչ ապրիր, թէկուզ ցրիչ լինես» — այս

հոգեբանութիւնը շատ բնորոշ է մեր կոմերիտական աշերի համար:

«Ճատ կոմերիտականներ՝ չըմբռնելով մեր երկրի ինդուստրացման նշանակութիւնը և ուղիները՝ տարերային կերպով կողմնակից են լինում գիւղատնտեսութեան զարգացման, սպառման միջոցների արտադրութեան զարգացման, մէջմ են դուրս գալիք գիւղատնտեսութեան մէջ պլանային սկզբունքները կիրառելու աշխատանքներին (բամբակի զաշտելը ցրինի ցանքը կիրածելը և այլն):

Այսպէս է «աջը», իսկ ի՞նչ է ներկայացնում իրենից «ձախը»:

Այս տեսակէտից էլ կացութիւնը փայլուն չէ. «Պարերելով աշ թեքման դէմ» որոշ շրջաններում (մինչև Տրոցկու վերջին ելոյիթը) մեր կաղակերպութիւնները թուացրի պայքարը «Ճախութեան», արոցկիդմի դէմ: Վերջերս անդամ մի քանի վայրերում տրոցկիստական նոր իմբակների յայտնաբերեցին Կոմունլի ներսում», որոնք քայլայալ կիրպով միացած այլ հակայիցափոխական տարրերի հական կոմերիտ հետո աշխատի պայքար են մղում մեր բոլոր ձեռնարկութիւնների դէմ, առանձնապէս կոլլուզոնների դէմ (Փարսի, Սարդարապատ, Քեռոփալու և այլն): Ամելութիւնը դէպի կոլլուզոններն իր գիւղուողգիական» ձեւառութեան է դտել սարդարապատի նախկին կոմերիտութիւնների հական պայքարը և ասել է կուլուզները հետո գիւղուողգիական անհարազատ թէրութիւնների գործութեանը ահապին կամարը:

Այս բաւական չէր, «այժմ «ձախից» մեր սպառնում է մի ուրեմն վանական և այլ միամիջակային տրամադրութիւնները: Ճատ անելով կոմերիտականները հետացնում են իրենց շաքերից միջակ գիւղացիներին իրեւ հակայիցափոխական տարրը, «ամենաշշին պատճաններու միութիւնից վաստում են բազմաթիւ միջակների», «մի շարք կոմերիտական թիջներում ոչ մի միջակ չկայ»: «Հանրածանօթ են դէպեքը, երբ հարկային յանձնաժողովներում նստած մեր կոմերիտականներից շատերը միջակն կուլակի շարքը զասեցին, ծանրացրին նրա հարկը և անգամ ցցիցն անհատական հարման տակ (Հայթաղ և այլն): Գարնանացանի կամամինայի ընթացքում մենք ականատես եղանք այնպիսի խայտապակ փաստերի, որ մի շարք գիւղերում (Արքել, Բիւրական և այլն) միջակները կամ բոլորովին վարկ ու սերմացու չստացան, կամ ստացան ընդհանուր վարկի 5-10 տոկոսի չափով (օր. Բիւրականում 700-ից 50 բուրքի, Արքելում 500-ից 20 բուրք. և այլն): Ասկ հակամիջակային այդ «քաղաքականութեան» մէջ մասն ունէին նաև կոմունլի մի քանի բջիջները»:

Տեղանեղ էլ «խորհուրդների վերընտութիւնների ժամանակ տեղի ունեցան միջակների ձայնազկելու բազմաթիւ դէպեքը»: «Ինչ խօսք, որ գասակարգային

\*) Փախարէնը կոմսումի շաքերներ են ընդունել 3 հազարից աւելի բաներ ու բատրակ երիտասարդներ, մեծ մասսք անգրագէտ-կիսազբագէտ:

թշամին հրճեց մեր կոմերիտականների անական վարժուաւելքից», իսկ որոց տեղեր «ողջ միջակութիւնը կազմակերպւած ձևով հանեց չփառուութեան, կոմունիտանների և բատրակնների դէմ: Միայն մէկ թաղամասում հակայեղափոխական տարրերի մէկ նշանով 63 միջակների մաս էր բարձրանում մեր լաւագոյն թեկնածուների դէմ»: Աւելին զեռ. «Ապարդ նկատուում է, որ իմաս նապակի է երիտասարդութեան հոսանքը դէմ:

«Ի՞նչուոգիս և զաղափարական դէրօրինուացիտն» կոմունոյի շարժերում կազմում է և Ամատուում հակայեղափոխական գլուխուուր նիւթիր «ՀԱԿՑԵՎ» համարակետական նրգ համարումարում»\*: Ի՞նչ հարցեր են ժամանուում Ամատուուն, այլիքն՝ Հայիովկուսին, որովհետեւ Ամատունին նրա զեկուցաբերն էր:

